

# ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳԻՐ

Երևանի Մխիթար Հերացու անվան  
պետական բժշկական համալսարանի  
ռեկտոր պարոն Արմեն Մուրադյանին  
ՀՀ քաղաքացի Արման Պետրոսյանից

Հարգելի՛ պարոն Արմեն Մուրադյան, այս նամակով իմ երախտագիտական շնորհակալությունն եմ հայտնում <<Հերացի>> թիվ 1 հիվանդանոցային համալիր պլաստիկ վերականգնողական վիրաբուժության և միկրովիրաբուժության բաժանմունքի բուժանձնակազմին՝ ղեկավար Արտավազ Բազրատի Սահակյանին և իմ բժիշկ Թեհմինե Հմայակի Ասատրյանին:

Դիմել եմ 2017թ. նոյեմբերի 20-ին, երբ ավտովթարից ձախ ականջս ամբողջությամբ կտրվել էր: Վթարը տեղի էր ունեցել կեսգիշերին: Առաջին օգնությունը ստացել եմ Սպիտակի բժշկական կենտրոնում: Այնտեղ բժիշկները անհնարին էին համարում ականջիս վիրահատությունն ու վերականգնումը: Սակայն մի քանի ժամ անց հարազատներիս խորհրդով դիմել եմ <<Հերացի>> թիվ 1 հիվանդանոցային համալիր, հերթապահ բժշկ Թեհմինե Հմայակի Ասատրյանին: Ժամանակին չդիմելու և ուշացնելու պատճառով մեծ մտավախություններ կար, որ ականջիս աճառը չի պահպանվի և ստիպված կլինենք դիմել լ բարդ պլաստիկ վիրահատության՝ կողաճառից ականջախեցլու ձևավորման: Սակայն ինձ հանդիպած լավագույն բժիշկների շնորհիվ, ավտովթարից 13 ժամ անց հնարավոր եղավ վիրահատություն անել և պահպանել ականջս՝ իր աճառով հանդերձ: Առաջին վիրահատությունը կատարվեց նույն օրը՝ նոյեմբերի 20-ին:

Երկրորդը՝ ղեկտեմբերի 28-ին, հաջորդը՝ 2018թ-ի մարտի 29-ին, և վերջապես վերջին վիրահատությունը կատարվեց օգոստոսի 24-ին, որից հետո ականջս ստացավ իր բնականին մոտ տեսքը:

Ամիսներ տևած բուժումը, չնայած իր դժվարություններին, հաջողությամբ ավարտվեց իմ բժշկի մեծ ջանքերի, հոգատարության ու բարձր պրոֆեսիոնալիզմի շնորհիվ: Վստահ էի, որ ցանկացած դեպքում իմ բժիշկ Թեհմինե Ասատրյանի շնորհիվ ականջս ունենալու է բնականին մոտ տեսք: Նշեմ նաև կարևոր մի փաստ, որ այս ընթացքում իմ բժշկի շնորհիվ ես հասկացա, որ այս կյանքում անհնարինը հնարավոր է դառնում, եթե մարդիկ իրոք ուզում են և պայքարում:

Շնորհակալ եմ, որ Դուք կաք ու մեր կողքին եք

ՀՀ քաղաքացի  Ա. Պետրոսյան  
08.09.2018թ.

ԵՐԵՎԱՆԻ Մ. ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎ.  
ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՄՈՒՏԵ ԹԻՎ 12903  
«03» 10 2018 թ.